

հետեւ կամք ընդ իշխանութեամբ օտար աղ-
դաց, յիմանալ նոցա զթղթակցութիւն մեր
ընդ արեւմտեայս՝ ի կարծիս լինին զմէնջ վտա-
րանջութեան, եւ յարուցանեն նեղութիւնս ի
վերայ մեր...: Այլ դու եթէ կարես յապա-
հովի եւ անվտանգ յղել զթուղթ մեր, գրեցից
այժմ միւս եւս նամակ նոր, եւ տաց քեզ հա-
սուցանել ի Հռովմ:

«Եւ ի յանձն առնուլ նորա յօժարու-
թեամբ՝ գրեաց Մովսէս միւսանգամ թուղթ
սիրոյ եւ հպատակութեան ընտանի եւ քաղցր
բանիւք առ սրբազան պապն Ուրբանոս. որում
ստորագրեցին եւ երկոտասան եպիսկոպոսունք
հայրապետանոցին. եւ ետ ի ձեռս Պօղոսի: Եւ
նորա առեալ զայն՝ տարաւ ի Նախջուան եւ
պատմեաց խնդութեամբ Ջահկեցւոց Ունիթօ-
ոաց. եւ անտի ի ձեռն հաւատարիմ անձանց
առաքեաց զթուղթն յԱրեւմուտս»:

«Ի չնչել Ունիթօուաց եւ այլոց ոմանց
վասն իրացս այսոցիկ՝ եհաս լուր գործոյն առ
այլազգի իշխանն Նախջուանայ. որոյ դժկա-
մակ լեալ ընդ այս, եւ միանգամայն կասկա-
ծեալ՝ թէ լատին կրօնաւորն այն եկեալ իցէ
վասն գտանելոյ նշխարս կամ դանձս, բարկա-
ցաւ, եւ առաքեաց խնդրակս զկնի նորա: Եւ
նոքա հասեալ՝ կալան զՊօղոս, եւ տարան առ
իշխանն. եւ հրամանաւ նորա արկին զնա ի
բանտ. եւ բազում անգամ դանակոծ արարին
իրբեւ զլրտես եւ զխռովարար. եւ չեղեւ հնար
ազատութեան, ոչ միջնորդութեամբ կաթո-
ղիկոսի եւ ոչ աղաչանօք այլոց՝ մինչեւ ցամա